ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մ. Ն. ՀԵՐԳՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ս. Ռ. ԽԱՉԻԿՅԱՆ
ԳՊՀ բակալավրի «Ֆինանսներ» բաժնի շրջանավարտ

Յուրաքանչյուր երկրի տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական զարգացումը կապված է ներդրումային գործունեության հետ, որը, նախապես մշակված ներդրումային քաղաքականությանը համապատասխան, առաջադրում է զարգացման երկարաժամկետ նպատակներ: Համաշխարհային տնտեսության ինտեգրմամբ պայմանավորված՝ կարևորվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) դերն ու նշանակությունը: ՕՈՒՆ է համարվում այն ներդրումը, որն ունի երկարաժամկետ բնույթ և տևական հետաքրքրություն է ներկայացնում տվյալ երկրի ռեզիդենտի համար, և ներդրողը զգալի դերակատարություն ունի այդ երկրի ռեզիդենտ ձեռնարկության կառավարման մեջ: Նշենք, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը զարգացող և զարգացած երկրների տնտեսության վրա միանման լինել չի կարող: Զարգացած երկրներում ՕՈՒՆ-երի ազդեցությունն այդքան էլ մեծ չէ, քանի որ դրանց դիմակայում է ազգային հզոր կապիտալը, որը զարգացող երկրներում հաճախ բացակայում է: Դրա մասին են վկայում իրավական դաշտում առկա տարբեր մոտեցումները՝ կապված օտարերկրյա ուղղակի ներդրումների հետ:

Արևմտյան մի շարք երկրներում (ԱՄՆ, Բելգիա, Շվեյցարիա, Անգլիա և այլն) ներդրումների մասին հատուկ օրենքներ չկան: Օտարերկրյա և ազգային ներդրումների գործընթացների իրավական կարգավորումն իրականացվում է՝ հիմնվելով ընդհանուր իրավական նորմատիվ ակտերի վրա: Օրինակ՝ Ֆրանսիայի կառավարությունը երկրի ներսում օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացման նկատմամբ ունի խիստ վերաբերմունք, իսկ Գերմանիայի կառավարությունը՝ ընդհակառակը: Եվրոպական երկրներից միայն Հունաստանը, Իտալիան, Պորտուգալիան, Իսպանիան և Թուրքիան ունեն օտարերկրյա

ներդրումները կարգավորող օրենսդրություն: Նշված երկրներում օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ ռեզիդենտ ներդրողները տեղական իշխանություններից անպայման պետք է ստանան ներդրումներ իրականացնելու թույլտվություն, մինչդեռ Գերմանիայում, Բելգիայում, Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում հատուկ թույլտվություն հարկավոր չէ, և օտարերկրյա կապիտալի թույլատրելի չափ սահմանված չէ: Նշենք, որ Շվեդիայում բնական ռեսուրսների արդյունահանմամբ զբաղվող ձեռնարկություններում կապիտալի 60%-ը և ձայների 80%-ը պետք է պատկանի ազգությամբ շվեդներին: Ֆինլանդիայի կառավարությունը գրեթե նույն պահանջն է ներկայացնում օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացմանը: Ֆրանսիայում կառավարության կողմից ընդունված ակտերը թույլ չեն տալիս, որ նավթի արդյունահանում ու վերամշակում իրականացնող ընկերություններում կառավարող դիրքերում լինեն այլ երկրի քաղաքացիներ: Մեծ Բրիտանիան, ընդհակառակը, ամեն կերպ փորձում է ներազդել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի ավելացման վրա, ինչն ուղեկցվում է արտասահմանյան առաջավոր տեխնոլոգիաների ներմուծմամբ և անգլիական արդյունաբերության ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծմամբ: Տնտեսագետների գնահատականներով բրիտանական արտադրության 20-25%-ը գտնվում է օտարերկրյա ներդրողների հսկողության տակ[1]: Կան նաև որոշակի սահմանափակումներ. եթե օտարերկրյա ուղղակի ներդրումներով ընկերությունն ունի արտասահմանում արտադրված ապրանքներ ներմուծելու և բրիտանական շուկայում իրացնելու նպատակ, ապա այն պետք է ֆինանսավորվի միայն օտարերկրյա միջոցների, այլ ոչ թե Բրիտանիայում ստացած փոխառությունների հաշվին[2]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում ներդրումների համար շահավետ են համարվում տեղեկատվական տեխնոլոգիաների, հանքարդյունաբերության ու մետալուրգիայի, զբոսաշրջության, քիմիական արդյունաբերության և այլ ոլորտներ: ՀՀ ներդրումային քաղաքակությունը նպատակ ունի բացահայտելու երկրի մրցակցային

---

[1]Вознесенская Н., Иностранные инвестиции: Россия и мировой опыт (сравнительно-правовой коментарий), ИНФРА-М, Москва, 2001

[2]Հովհաննիսյան Ա., Կարապետյան Ն., Օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականություն, Գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, ԵրՃՇՊՀ, 2012:

առավելությունները, ներգրավելու ներդրումների անհրաժեշտ ծավալներ՝ ապահովելով երկրի տնտեսական զարգացումը: Հարկ է նշել, որ ներդրումային նպատակաուղղված քաղաքականությամբ և նրա արդյունավետ իրականացմամբ է պայմանավորված Հայաստանի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը: Հայաստանում իրականացվող ներդրումների աճը կնպաստի այնպիսի կարևորագույն խնդիրների լուծմանը, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսության մեջ հատուկ նոու-հաուների ներգրավումը, նոր շուկաների բացահայտումն ու դրանց հասանելիությունը, այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները և այլն:

ՀՀ ներդրումային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է ազատական սկզբունքների հիման վրա և նպատակաուղղված է համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ինտեգրմանը: Վերոնշյալով պայմանավորված՝ 1994թ.-ից ՀՀ կառավարությունը ներդրումների նկատմամբ հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն: «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքի ընդունմամբ ՀՀ կառավարությունը կարևորել է օտարերկրյա ներդրումների խթանիչ դերը տնտեսական աճի ապահովման գործում, ճանաչել է օտարերկրյա ներդրումների և ներդրողի պաշտպանության կարևորությունը, ապահովել է օտարերկրյա ներդրումների խրախուսման իրավական դաշտ՝ սահմանելով օտարերկրյա ներդրողի համար մի շարք երաշխիքներ.

- Երաշխավորում է հավասար վերաբերմունք օտարերկրյա և տեղական ներդրումների նկատմամբ: Սույն օրենքի 6-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանում ներդրումների և դրանց հետ կապված իրավական ռեժիմը չի կարող նվազ բարենպաստ լինել, քան Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց համար: Այսինքն՝ օտարերկրյա ներդրողներին տրամադրվում է «ազգային ռեժիմ»[1]:
- Զգալիորեն սահմանափակում է պետության կողմից ունեցվածքի բռնագրավման հնարավորությունը և պահանջում է պետության կողմից լրիվ փոխհատուցում ազգայնացման կամ բռնագրավման դեպքում: Պետական մարմինները չեն կարող բռնագրավել օտարերկրյա

[1] «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1994 թվականի հուլիսի 31-ին:

ներդրումները, առգրավումը թույլատրվում է միայն դատական վճռով և պետության կողմից լրիվ փոխհատուցմամբ:

- Ներդրումները պաշտպանված են 5 տարի ժամկետով՝ օրենսդրական անբարենպաստ փոփոխությունների դեպքում:
- Տալիս է տնտեսության տարբեր ոլորտներում օտարերկրյա ներդրումներ կատարելու հնարավորություններ:
- Տրամադրում է հայաստանյան և միջազգային դատարաններ դիմելու հնարավորություն՝ տնտեսական վեճերը լուծելու նպատակով:
- Տալիս է շահույթների և սեփականության լրիվ հայրենադարձման հնարավորություն:
- Պաշտպանում է մտավոր սեփականությունը, ապահովում է մի շարք այլ իրավունքներ և արտոնություններ, որոնք օտարերկրյա ներդրողների կողմից դիտվում են որպես կարևոր, եթե ոչ հիմնական:

Օրենքը հաճախ դառնում է նաև որպես հովանու դեր կատարող իրավական փաստաթուղթ, որը սահմանում է ներդրումային քաղաքականության համընդհանուր սկզբունքները, սակայն ներկայումս լիովին չի բավարարում արդի պահանջներին, մասնավորապես կապված ներդրողների պաշտպանվածության հետ:

ՀՀ կառավարության 08.10.2015թ.-ի նիստի №45 արձանագրությամբ հաստատվել է «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգը, որը մշակել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացրել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը: «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգում սահմանվել են Հայաստանի ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրները՝ ներդրումային միջավայրի բարելավում, օրենսդրական դաշտի կատարելագործում և ՀՀ տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանում:

Հայեցակարգում բնութագրված է Հայաստանի ներդրումային միջավայրը, սահմանված են ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները, և նախանշված են վերջիններիս իրականացման համար անհրաժեշտ պետական քաղաքականության սկզբունքները, ուղղությունները և միջոցառումները.

- ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորում,
- կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացում,

- երկրի մրցակցային առավելությունների բացահայտում,
- Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացում,
- շուկայական ենթակառուցվածքի զարգացում,
- որակյալ և բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծում,
- մարդկային կապիտալի զարգացում և այդ ամենի հիման վրա տնտեսական կայուն աճի և բնակչության բարեկեցության ապահովում, ինչը համահունչ է ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (2014-2025թթ.) գերակայություններին[1]:

Ի լրումն՝ Հայաստանը ստորագրել է «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» երկկողմ համաձայնագրեր 41 երկրների հետ: Ապահովելով առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկրի կարգավիճակ՝ երկկողմ ներդրումային համաձայնագրերն օտարերկրյա ներդրողների համար սահմանում են բարենպաստ պայմաններ, մասնավորապես՝ ներդրումների անձեռնմխելիություն, ծագած վեճերը միջազգային դատարաններում լուծելու հնարավորություն և ստացված շահույթի ազատ փոխանցում:

Ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի ներդրումային ոլորտում առկա որոշակի հիմնախնդիրներ կարող են գրավել կամ վանել ներքին և արտաքին ներդրողներին, ուստի անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ ներդրումային քաղաքականություն, որը նախադրյալներ կստեղծի ներդրումային միջավայրի բարելավման և գրավչության ապահովման համար: Հայաստանի ներդրումային միջավայրն աչքի է ընկնում բարձր ռիսկայնությամբ, որը քաղաքական անորոշության և սոցիալ–տնտեսական վատ պայմանների հետևանք է: Նշենք դրանք.

- Տնտեսական շրջափակում - Հայաստանը՝ որպես հումքային ռեսուրսներով աղքատ և փոքր ներքին շուկա ունեցող երկիր, մեծ կախում ունի հումքի ներմուծումից և ապրանքի արտահանումից, սակայն տարածաշրջանում ռազմաքաղաքական ընդհարումների պատճառով տրանսպորտային հիմնական ուղիների շրջափակումը և դեպի բաց ծով ելքի բացակայությունն ազդում են Հայաստանում արտադրվող ապրանքների մրցունակության վրա միջազգային շուկաներում:

---

[1] «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգ՝ հաստատված 2015թ. ՀՀ կառավարության 2015թ. հոկտեմբերի 8-ի №45 արձանագրային որոշմամբ:

➢ Քաղաքական և ռազմաքաղաքական անկայուն վիճակ - Պոտենցիալ ներդրողների ներգրավման տեսանկյունից քաղաքական և ռազմաքաղաքական անկայուն վիճակը սահմանափակող է և ռիսկային: Հայաստանում քաղաքական ռիսկը պայմանավորված է արտաքին քաղաքական անկայունությամբ, որը դրսևորվում է Ադրբեջանի և Թուրքիայի շրջափակմամբ, Վրաստանում և Հյուսիսային Կովկասում առկա ազգամիջյան առճակատումների հետևանքով տրանսպորտային հաղորդակցության միջոցների անգործությամբ:

➢ Փոքր ներքին շուկա - ՀՀ բնակչության փոքր թվաքանակը, ինչպես նաև տնտեսության փոքր լինելու հանգամանքը և բնակչության 1 շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքի ցածր ցուցանիշը խոչընդոտում են ՕՈՒՆ-երի ներգրավմանը:

➢ Կոռուպցիա - ՀՀ ներդրումային ռիսկը մեծացնող գործոն է կոռուպցիան: 176 երկրների շարքում Հայաստանը կոռուպցիայի մակարդակով գտնվում է 113-րդ տեղում[1]: Նման ցուցանիշը չի կարող խթանել ՕՈՒՆ-երի ծավալների հետագա մեծացումը: Ընդ որում երկրի ներդրումային միջավայրի գրավչության վրա բացասական ազդեցություն է թողնում նաև ստվերային տնտեսությունը, չկայացած ապահովագրական համակարգի առկայությունը:

➢ Բնական ռեսուրսների սակավություն - Հայաստանն աչքի չի ընկնում բնական ռեսուսների հարստությամբ: Ներդրումների իրականացման մեծ հնարավորություն կա պղնձի, մոլիբդենի, ոսկու և որոշ հազվագյուտ մետաղների արյունահանման և վերամշակման բնագավառներում: Սակայն վառելիքային հումքի արդյունաբերական պաշարների բացակայությունը մեր տնտեսությունը կախման մեջ է պահում այդ հումքի ներմուծումից:

➢ Ենթակառուցվածքային խնդիրներ – Հայաստանը, լինելով հումքային ռեսուրսներով աղքատ և փոքր ներքին շուկա ունեցող երկիր, մեծ կախում ունի հումքի ներմուծումից և ապրանքի արտահանումից: Ուստի տրանսպորտային մեծ ծախսերը, որոնք տարածաշրջանում ռազմաքաղաքական ընդհարումների պատճառով հաղորդակցման ուղիների շրջափակման և դեպի բաց ծով ելքի բացակայության արդյունք են, ազդում են միջազգային շուկաներում Հայաստանում արտադրվող ապրանքների մրցունակության վրա: Կարևորվում են նաև

[1] Corruption Perceptions Index (2016), http://www.transparency.org

կենսաթոշակային և ներդրումային հիմնադրամների, բրոքերային կազմակերպությունների, լիզինգային, խորհրդատվական և աուդիտորական ընկերությունների առկայությունն ու արդյունավետ գործունեությունը, քանի որ դրանք կարող են դառնալ երկարաժամկետ ներդրումներ կատարելու որոշում կայացնելու նախապայման:

➢ Իրավական դաշտ - «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն ունենալով բազմաթիվ դրական կողմեր, լիովին չի բավարարում արդի պահանջներին՝ կապված ներդրողների պաշտպանվածության հետ: Այս տեսանկյունից ելնելով՝ իրավական դաշտի հիմնական թերությունն է օրենսդրական դաշտի անկատարությունը, ենթաօրենսդրական ակտերի, օրենքների հստակ կիրառումն ապահովող անհրաժեշտ որոշումների ու իրավական այլ ակտերի պակասը:

➢ Մոնոպոլացում - Հայաստանում մոնոպոլացման բարձր մակարդակը հանգեցնում է մի շարք հետևանքների, որոնք խոչընդոտում են ՀՀ տնտեսական աճի ապահովմանը. ապրանքների և ծառայությունների գների աճ, սղաճի բարձր տեմպ, կապիտալի և արժեթղթերի շուկայի ոչ լիարժեք զարգացած վիճակ, փոքր և միջին բիզնեսի զարգացման խոչընդոտներ, արտաքին շուկայում ցածր մրցունակություն և այլն: Ներքին արտադրողները, չունենալով մրցակիցներ ներքին տնտեսությունում, արտադրատեխնիկական զարգացման ոլորտում մոտիվացված չեն կատարելու նորարարություններ, և դա հանգեցնում է արտաքին շուկայում նրանց մրցունակության անկմանը՝ ազդեցություն թողնելով միջազգային ասպարեզում ՀՀ ընդհանուր տնտեսության մրցունակության վրա: Եթե այս գործընթացը շարունակվի, ապա արտաքին շուկայում աստիճանաբար կնվազի հետաքրքրությունը մեր երկրի արտադրանքի նկատմամբ, իսկ Հայաստանը կկորցնի իր նկատմամբ օտարերկրյա ներդրողների հետաքրքրվածությունը: Հետևաբար երկրում առկա մոնոպոլացման բարձր մակարդակը, սեփականության խիստ կենտրոնացված լինելը հանգեցնում են բիզնեսի ֆինանսավորման և ՕՈՒՆ-երի ծավալների կրճատման: Ներդրումային միջավայրի զարգացման գործում առանցքային դեր ունի մրցակցային միջավայրի բարելավումը: Չնայած վերջին տարիներին նշանակալիորեն բարձրացել է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՀՀ ՏՄՊՊՀ) դերը, սակայն թերի

օրենսդրական դաշտը և ռեսուրսների պակասը խոչընդոտում են մրցակցային քաղաքականության արդյունավետ իրականացմանը:

Վերոնշյալ հիմնախնդիրների առկայության պայմաններում օտարերկրյա ներդրումների հոսքը չի կարող լինել բավարար արդյունավետ, ուստի անհրաժեշտ է.

- Չանտեսելով էքստենսիվ ներդրումների դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ Հայաստանում պետք է ընդլայնել ինտենսիվ ներդրումների ծավալը, որի արդյունքում ՀՀ տնտեսությունը կունենա ժամանակակից և նորագույն տեխնոլոգիաներով հագեցած կազմակերպություններ, որոնք ի զորու կլինեն ապահովելու միջազգային չափանիշներին համապատասխանող մրցունակ ապրանքներ:
- Երկրի ներդրումային քաղաքականություն մշակելիս վերանայել ոլորտին առնչվող օրենսդրությունը՝ հաշվի առնելով ներդրողների պաշտպանվածության հարցերը, քանի որ ներդրողները վստահ չեն, որ իրենց ներդրումը, ակտիվները, շինությունները և աշխատողներն ունեն անհրաժեշտ պաշտպանվածություն:
- Ներդրումների խրախուսման ռազմավարություն մշակելիս հիմնվել միջազգային պրակտիկայում կիրառվող խրախուսման միջոցների՝ վարկանիշի ձևավորման, ներդրումային ծառայությունների մատուցման և ներդրումների ուղղակի ներգրավման միջոցների ճիշտ համակցման վրա:
- ՕՈՒՆ-եր ներգրավելու ծրագրերում առանձնացնել գերակա ճյուղեր, ընդ որում ճյուղային գերակայությունը որոշելիս ուշադրություն դարձնել մարզային գերակայության վրա և կիրառել արտոնությունների ճկուն մեխանիզմ, որը հնարավորություն կտա ապահովելու սոցիալ-տնտեսական կայուն զարգացում:
- Մշակել ներդրողների բողոքները գրանցելու, դրանց հետևելու, քննարկելու և լուծելու գործիքակազմ, որը կապահովի ներդրումային գրավիչ միջավայր և կնպաստի Հայաստանում նոր ներդրումների ներգրավմանը:

Բանալի բառեր՝ *ներդրում, օտարերկրյա ուղղակի ներդրում, ներդրումային քաղաքականություն, ներդրումային միջավայր, ներդրումային գրավչություն:*

Օգտագործված գրականություն
Մասնագիտական գրականություն

1. Ավետիսյան Ս. և ուրիշներ, Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ, զարգացման հեռանկարներ, Երևան, Տնտեսագետ, 2015:
2. Բաղանյան Լ. Հ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Երևան, 2007:
3. Կիրակոսյան Գ., Ղուշչյան Հ., Տնտեսագիտական բացատրական բառարան, «Տնտեսագետ», Երևան, 1999:
4. Հովհաննիսյան Ա., Կարապետյան Ն., Օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականություն, Գիտական աշխատությունների ժողովածու, Երևան, ԵրՃՇՊՀ, 2012:
5. Вознесенская Н., Иностранные инвестиции: Россия и мировой опыт (сравнительно-правовой коментарий), ИНФРА-М, Москва, 2001.
6. Доклад о мировых инвестициях за 2016 год, ООН, Женева, 2016.

Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր

1. «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2011 թվականի մայիսի 25-ին:
2. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1997 թվականի մայիսի 14-ին:
3. «ՀՀ ներդրումային քաղաքականության» հայեցակարգ՝ հաստատված ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի №45 արձանագրային որոշմամբ:
4. «ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»՝ հաստատված ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի № 442-Ն որոշմամբ:
5. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1994 թվականի հուլիսի 31-ին:

Համացանցային կայքեր

1.www.armstat.am – ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք:
2. www.arlis.am - ՀՀ իրավական տեղեկատվական համակարգ:
3. www.gov.am - ՀՀ կառավարության պաշտոնական կայք:

4. www.investmentprojects.am - "Invest in Armenia" առցանց ներդրումային ծրագրերի ներկայացման հարթակ:
5. www.investorwords.com - "InvestorWords" ֆինանսական բառարան:
6. www.mineconomy.am - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պաշտոնական կայք:

ISSUES OF THE INVOLVEMENT OF FOREIGN DIRECT INVESTMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

M. N. HERGNYAN
Candidate of Economics, Associate Professor
S. R. KHACHIKYAN
Graduate of the Department of Finance, GSU

Taking into account the role of Foreign Direct Investment (FDI) in the development of the economy, the article examines the investment policy of Armenia aimed at identifying the country's competitive advantages, involving the necessary volumes of investments, and promoting economic development based on it.

Since Armenia's further industrial and scientific and technical development are conditioned by the investment-oriented policy and its effective implementation, the issues of the investment sector have been identified, the solution of which will stimulate the inflow of foreign capital to the Republic of Armenia.

ЗАДАЧИ ПРИВЛЕЧЕНИЯ ИНОСТРАННЫХ ПРЯМЫХ ИНВЕСТИЦИЙ В РЕСПУБЛИКУ АРМЕНИЯ

М. Н. ЕРГЯН
Кандидат экономических наук, доцент
С. Р. ХАЧИКЯН
Выпускник бакалавриата отделения ,,Финансы" ГГУ

Учитывая роль прямых иностранных инвестиций (ПИИ) в развитии экономики, в статье рассматривается инвестиционная политика Армении, которая направлена на выявление конкурентных преимуществ страны, на привлечение необходимых объемов инвестиций и на основе последнего,

обеспечение экономического развития. Инвестиционной целенаправленной политикой и ее эффективным внедрением обусловлен дальнейший ход промышленного и научно-технического развития Армении, исходя из этого, нами были отделены те задачи инвестиционной сферы, решения которых будет способствовать притоку иностранного капитала в Республику Армения.